ԴԱՆԻԵԼ ԲԵԼԻ «ԳԱԼԻՔ ՊՈՍՏԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ» ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԴՐԱՏ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Արդի բուրժուական հասարակության խոր ճգնաժամը, որն ընդգրկել է ոչ միայն նրա տնտեսակարգը, այլև իմպերիալիզմի սոցիալ-քաղաքական, մշակութային ու գաղափարախոսական բացառապես բոլոր ինստիտուտները, սոցիալական զարգացման մարքս-լենինյան ըմբռնման անժխտելի ապացույցն է։

Կապիտալիզմի զարգացման բարձրագույն և վերջին ստադիայի՝ իմպերիալիզմի, նեխման ու պարազիտիզմի մասին լենինյան հետևությունն այսօր առավել քան արդիական է։ Այդ հասարակարգի նյութական նվաճումների և նրա հոգևոր նկարագրի անհամապատասխանությունը, գիտա-տեխնիկական առաջընթացի ընձեռած հնարավորությունների ու դրանց իրականացմանը խոչընդոտ հանդիսացող բուրժուական հասարակական հարաբերությունների միջև հակասությունը Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի ուսմունքի ճշմարտացիության հավաստումն են։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXV համագումարը դասակարգային, կուսակցական դիրքերից տվեց արդի դարաշրջանի և համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման գլխավոր օրինաչափությունների խոր, գիտական վերլուծությունը։

Ներկայումս երկու հակադիր սոցիալական սիստեմների, երկու աշխարհայացքների անհաշտ պայքար է գնում։ Այդ պայքարում, ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևը, «չի կարող տեղ լինել չեզոքության ու կոմպրոմիսների համար»[1]։

Համագումարը տվեց նաև ժամանակակից գաղափարախոսական պայքարի զարգացման օրինաչափությունների բնութագիրը, նշելով, որ գաղափարական պրոբլեմները գնալով առաջնակարգ նշանակություն են ստանում։

Արդի պայմաններում իմպերիալիզմի պաշտպանությունը հատուկ ճիգեր է պահանջում բուրժուական գաղափարախոսներից։ Այժմ դժվար է գտնել բուրժուական մի լուրջ գաղափարախոսի, որը բացահայտ և անվերապահորեն կարողանա հավաստել մասնավոր շահի, շահագործման վրա հիմնված հասարակության գոյության իրավունքը։ Դա, անշուշտ, բուրժուական գաղափարախոսության ճգնաժամի ցուցանիշ է։ Սակայն, սա չի նշանակում, որ բուրժուազիան հաշտվել է սեփական կործանման մտքի հետ, չի տեսնում զարգացման ոչ մի հեռանկար։ Ընդհակառակը, նա մեծ հույսեր է կապում գիտա-տեխնիկական հեղափոխության պայմաններում պետական-մոնոպո-

---

1 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1976, էջ 122։

լիստական սիստեմի զարգացման հետ՝ փորձելով սոցիալ-ռեֆորմիզմի դիրքերից լուծել կապիտալիզմի հակասությունները։

Ժամանակակից հեղափոխական պրոցեսն ընթանում է գիտա-տեխնիկական աննախադեպ առաջընթացի, հասարակական զարգացման տեմպերի հզոր արագացման պայմաններում։ Արդի գիտա-տեխնիկական հեղափոխությունը առաջադրում է մի շարք բարդ, կոմպլեքսային բնույթի գիտա-տեխնիկական, սոցիալ-տնտեսական, քաղաքական և աշխարհայացքային-գաղափարախոսական պրոբլեմներ։ Դրանք խիստ դինամիկ պրոբլեմներ են, «կողմնորոշված են դեպի ապագան» և գիտնականներից պահանջում են համապատասխան մոտեցում։ Տվյալ դեպքում խոսքը արդի պայմաններում գիտա-տեխնիկական ու սոցիալական առաջընթացի փոխհարաբերության, հասարակության զարգացման հիմնական տենդենցների, ուղիների կանխատեսման մասին է։ Նշված պրոբլեմները գտնվում են ժամանակակից գաղափարախոսական պայքարի կենտրոնում և կարելի է ասել հիմնականում որոշում են այդ պայքարի առանձնահատկությունները։

Մարդկության ապագայի կանխատեսմանն ուղղված ուսումնասիրությունները լայն տարածում են ստացել Արևմուտքում։ Բազմաթիվ պրոբլեմային գիտահետազոտական կենտրոններում աշխատում են հազարավոր գիտնականներ, որոնց գործունեության ֆինանսավորման համար միլիոններ են հատկացվում։ Միայն Միացյալ Նահանգներում գործում են 15 խոշոր ինստիտուտներ, որտեղ գիտնականները (ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ, կենսաբաններ, տնտեսագետներ, հոգեբաններ, պատմաբաններ, փիլիսոփաներ, սոցիոլոգներ) զբաղվում են գիտա-տեխնիկական հեղափոխության երկարաժամկետ տենդենցների, կապիտալիստական երկրների զարգացման սոցիալական հեռանկարների ուսումնասիրմամբ[2]։

Պրոգնոզների, կանխատեսումների ու «մարգարեությունների» օգնությամբ իմպերիալիզմը փորձում է հարմարվել նոր պատմական պայմաններին։ Բուրժուական գաղափարախոսները, միաժամանակ, մշակում են նոր տեսություններ, որոնք հակադրվում են գիտական կոմունիզմին և կատարում են որոշակի սոցիալական ֆունկցիա՝ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի շահերին համապատասխան գաղափարախոսական մշակման ենթարկելով ժողովրդական զանգվածներին։ Նշված տեսությունները Արևմուտքում միավորված են «ֆուտուրոլոգիա» անվան տակ[3]։

Սովետական և արտասահմանյան մարքսիստ-գիտնականներն արդեն տվել են բուրժուական ֆուտուրոլոգիայի սկզբունքային գնահատականը, բացահայտել նրա սոցիալական ֆունկցիան[4]։ Փորձեր են արվել նաև ցույց տալու

---

[2] Хаген Байнхауер, Эрнст Шмакке, Мир в 2000 году, М., 1973, стр. 15.

[3] «Ֆուտուրոլոգիա» տերմինը 40-ական թվականներին առաջարկեց գերմանացի փիլիսոփա Օսիպ Ֆլեհտհայմը, որը նա սահմանում էր որպես «գիտություն ապագայի մասին»։ Ֆլեհտհայմը չէր թաքցնում, որ «ֆուտուրոլոգիան» պետք է հակադրվի պատմության մատերիալիստական ըմբռնմանը։

[4] «Философия и прогностика». М., 1971; «Будущее человеческого общества». Сб. под ред. Е. Д. Модржинской и Ц. А. Степаняна, М., 1971; «Зарубежные марксисты в борьбе против буржуазной идеологии», М., 1971; И. В. Бестужев-Лада. Окно в будущее. М., 1972; «Актуальные проблемы борьбы с антикоммунизмом», М., 1973; Э.

բուրժուական սոցիալական պրոգնոստիկայի մեթոդաբանական հիմքերը (յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար)։ Տվյալ հոդվածում, որը նվիրված է ժամանակակից ամերիկյան բուրժուական սոցիալական մտքի հանրահայտ ներկայացուցիչներից մեկի՝ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, ամերիկյան արվեստի ու գիտությունների ակադեմիայի հիմնած «Դեպի 2000 թվականը» հանձնաժողովի նախագահ Դանիել Բելի «պոստինդուստրիալ հասարակության» տեսության քննադատական վերլուծությանը, կաշխատենք տալ բուրժուական սոցիոլոգիայում լայնորեն տարածված այդ տեսության գնահատականը՝ հիմնվելով նրա իմանենտ վերլուծության վրա։

60-ական թվականների վերջին և 70-ական թթ. սկզբներին բուրժուական սոցիոլոգիայի ճգնաժամը խիստ սրվեց։ Դա պայմանավորված էր երկար տարիներ տիրապետող տեխնոկրատական ուղղության կրախով։ Կյանքը ցույց տվեց, որ գիտա-տեխնիկական հեղափոխության պրոբլեմների լուծման փորձերն այդ ուղղության դիրքերից լիովին ապարդյուն են։ Բուրժուական սոցիոլոգիայում առաջացավ մի նոր ուղղություն, որը պայմանականորեն կարելի է անվանել «սայենտոկրատական» (անգլերեն science—գիտություն բառից)։

Եթե տեխնոկրատները տեխնիկան ու տեխնոլոգիական նորամուծությունները դիտում էին որպես հասարակական կառուցվածքի վերափոխման հիմք, ապա «սայենտոկրաաները» այդպիսի հիմք են համարում գիտության ինստիտուտը։ Իրենց ուսումնասիրություններում նրանք հետազոտում են գիտության դերն արդի հասարակության տնտեսական, սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքում։ Այս դեպքում գիտա-տեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքները միանշանակ կապի մեջ են դրվում գիտության զարգացման տվյալ մակարդակի հետ։ Կառուցվածքային տեղաշարժերն էկոնոմիկայում, հասարակական ու անհատական գիտակցության մեջ, բուրժուական մշակույթի և բարոյականության ճգնաժամը, բուրժուական ապրելակերպի արժեքների ճգնաժամը— այս ամենը գնահատվում է որպես ժամանակակից գիտության զարգացման օրինաչափ հետևանք։

«Սայենտոկրատական» գաղափարներն առավել ցայտուն արտացոլվեցին Դանիել Բելի «պոստինդուստրիալ հասարակության» տեսության մեջ։ «Պոստինդուստրիալ հասարակություն» տերմինը դարձավ յուրատեսակ մի ստերեոտիպ, որն օգտագործում են բուրժուական գաղափարախոսները ապագա հասարակությունը նկարագրելու համար։ Թեև ժամանակակից բուրժուական փիլիսոփայական ու սոցիոլոգիական գրականության մեջ ապագա հասարակության բազմաթիվ այլ անվանումներ կան (օրինակ՝ Ջ. Գելբրայթի՝ «նոր ինդուստրիալ», Թ. Բենսի՝ «պոստ-շուկայական», Ջ. Լիհտհեյմի՝ «պոստ-բուրժուական», Ա. Էտցիոնու՝ «ակտիվ», Զ. Բժեզինսկու՝ «տեխնոտրոն», Օ. Թոֆ-

---

А. Араб-Огли, В лабириите пророчеств. Социальное прогнозирование и идеологическая борьба, М., 1973; Л. Лавалле, За марксистское исследование будущего, М., 1974; Г. Б. Хромушин, Современный мир и идеологическая борьба, М., 1974; «Борьба идей в современном мире», М., 1975, т. 2; Ю. Ожегов, Социальное прогнозирование и идеологическая борьба, М., 1975; Г. Иконникова, Теория «постиндустриального общества». Будущее человечества и его буржуазные толкователи, М., 1975; М. Б. Митин, Проблемы современной идеологической борьбы. Критика социологических и социально-политических концепций, М., 1976 и др.

լերի՝ «գերինդուստրիալ»), սակայն Բելի «պոստինդուստրիալ հասարակություն» տերմինը առավել տարածված է[5]։

1970 թ. Շվեյցարիայում կայացավ արևմտյան սոցիոլոգների միջազգային գիտաժողով՝ նվիրված Դանիել Բելի «պոստինդուստրիալ հասարակության» կոնցեպցիային։ Գիտաժողովի նյութերը լույս տեսան անգլիական սոցիոլոգիական ամսագրերից մեկում[6]։ Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրենք՝ բուրժուական սոցիոլոգները, երկակի վերաբերմունք ունեն Բելի տեսության նկատմամբ։ Չնայած որոշ քննադատական ելույթներին, սոցիոլոգների բավական ստվար մի խումբ ընդունեց «պոստինդուստրիալիզմի» կոնցեպցիան։ Նշենք նաև, որ ոմանք Բելին մեղադրեցին մարքսիզմին տուրք տալու մեջ (դա նորություն չէ. բուրժուական «կատաղիները» միշտ էլ լիբերալներին մեղադրել են մարքսիզմի ու կոմունիզմի մեջ)։ «Պոստինդուստրիալ հասարակության» տեսությունը դաղափարախոսական պայքարի առարկա դարձավ ոչ միայն մարքսիստների ու բուրժուական գաղափարախոսների միջև։

Վիճաբանություններն հատկապես սուր բնույթ ստացան այն բանից հետո, երբ 1973 թ. լույս տեսավ Դանիել Բելի «Գալիք պոստինդուստրիալ հասարակությունը։ Սոցիալական կանխատեսման փորձ» մեծածավալ գիրքը[7], որտեղ հեղինակը փորձում է ընդհանրացնել արդի գիտա-տեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքները, կանխագծել բուրժուական քաղաքակրթության զարգացման հեռանկարները։ Ինչպես բոլոր բուրժուական ֆուտուրոլոգները, Բելը ևս փորձում է ուրվագծել ապագա հասարակարգը, բնութագրել նրա հիմնական գծերը և, որ ամենակարևորն է, կանխագծել արևմտյան հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքում տեղի ունենալիք փոփոխությունները։ Ամերիկյան սոցիոլոգը փորձում է հաղթահարել տեխնոկրատիզմի և սոցիալական հոռետեսության գաղափարախոսների ծայրահեղությունները։ Եթե առաջինները բուրժուական քաղաքակրթության զարգացման մեջ ոչ մի հակասություն չեն տեսնում, ապա երկրորդ ուղղության ներկայացուցիչները պրոբլեմատիկ են համարում ընդհանրապես մարդկային հասարակության հետագա գոյությունը գիտա-տեխնիկական հեղափոխության պայմաններում[8]։

Դանիել Բելը չի ժխտում, որ ժամանակակից բուրժուական հասարակությունը զարգանում է խոր ճգնաժամի պայմաններում։ Ամերիկայի Միացյալ Նահանգների սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքից բերված օրինակներով նա ցույց է տալիս գոյություն ունեցող սոցիալական սիստեմի անկայունությունը[9], հավաստում բուրժուական սոցիալական արժեքների ճգնա-

---

[5] D. Blaisdell, Technology—the key to better environment. Values, profits and growth in post-industrial society. N. Y., 1973; A. Touraine, The post-industrial society. Tomorrow's social history; classes, conflicts and culture in the programmed society. Transl. by L. F. X. Maykew. N. Y., 1971.

[6] „Survey", L., 1971, vol. 16, № 1.

[7] D. Bell, „The Coming of Post-Industrial Society. A Venture in Social Forecasting, New York, 1973.

[8] Т. И. Ойзерман, Технофобия как феномен буржуазного сознания (в кн. «Идеологические проблемы научно-технической революции». М., 1974).

[9] D. Bell, Unstable America („Encounter", L., 1970, June)

ժամը։ «...այդ ճգնաժամի ընդհանուր հետևանքը,— գրում է Բելը,— քաղաքացիական պարտքի զգացումի կորուստն է, օրենքին ենթարկվելու պատրաստակամության, մյուս մարդկանց իրավունքները հարգելու, հասարակության հաշվին հարստանալու գայթակղությունից հրաժարվելու ընդունակության կորուստը»[10]։

Վիճաբանելով տեխնոկրատների հետ, Դանիել Բելը մերժում է նրանց կողմից առաջարկվող հասարակության զարգացման պարզամիտ մոդելը։ Նա իրավացիորեն քննադատում է տեխնոկրատների պրագմատիզմը, «գռեհիկ էկոնոմիզմը», գտնելով, որ այդպիսի մոտեցումը ղեկավարվում է վաղանցուկ շահի, անմիջական օգտակարության չափանիշով։ Ըստ Բելի, տեխնոկրատական մտածելակերպը նեղ է և սահմանափակված «էկոնոմիզացնող» մտածելակերպի շրջանակներով։ Անհրաժեշտ է հրաժարվել այդ մտածելակերպից և ընդունել «սոցիոլոգիզացնող» մտածելակերպ, որը հիմնված է ոչ թե անհատական շահի, տնտեսական բարօրության մերձակա նպատակների հաշվառման վրա, այլ հասարակական շահի, մարդկային քաղաքակրթության կոմպլեքսային զարգացման սոցիոլոգիական հեռանկարների բազմակողմանի ուսումնասիրության վրա։ Այս դեպքում առաջին պլանում հանդես է գալիս բանականությունն հեգելյան այն ըմբռնմամբ, երբ խոսքը գնում է բնության և հասարակության, օբյեկտի և սուբյեկտի միջև հակասության պատմական լուծման մասին։

Ըստ Բելի, «պոստինդուստրիալ հասարակությունը», որպես ապագայի մոդել, բնութագրվում է միատիպ փոփոխություններով միայն սոցիալական կառուցվածքի առումով։ Ինչ վերաբերում է այս կամ այն հասարակության յուրահատկություններին, ապա դրանք կարող են դրսևորվել՝ կախված տվյալ հասարակական սիստեմի քաղաքական և մշակութային առանձնահատկություններից։ Այս տեսակետից Բելը համաձայն չէ կոնվերգենցիայի այն կոնցեպցիաների հետ, որոնք միանշանակ կապ են տեսնում հասարակության տնտեսական կառուցվածքի և պետական կառավարման միջև։ Նա փորձում է իր տեսությունը հակադրել ոչ միայն տեխնոկրատական տեսություններին, այլև կոնվերգենցիայի գաղափարախոսների կոնցեպցիաներին։

Մերժելով հասարակական զարգացման վերոհիշյալ մեկնաբանությունները, ամերիկյան սոցիոլոգը փորձում է հիմնավորել քաղաքակրթության զարգացման հեռանկարների սեփական ըմբռնումը։ «Պոստինդուստրիալ հասարակության» տեսությունը կոչված է ծառայելու այդ նպատակին։

Չնայած իր պարզությանը, այդ տեսությունը պարունակում է բազմաթիվ պրոբլեմներ, հակասական ու երկիմաստ դատողություններ, բարձրացված, բայց չլուծված հարցեր։

«Պոստինդուստրիալ հասարակության» տեսական-մեթոդաբանական հիմքերն, ըստ երևույթին, պետք է փնտրել XIX դ. գերմանացի փիլիսոփա Գ. Ֆայհինգերի փիլիսոփայության մեջ, որը հեղինակի կողմից ստացել է «ֆիկցիոնալիզմ» անունը։ Բելը նշում է, որ իր տեսությունը հիմնվում է «ինչ կլիներ, եթե...» սկզբունքի վրա և իրենից ներկայացնում է օգտակար մի ֆիկցիա։ Այս առումով այն համադրելի չէ որևէ կոնկրետ հասարակության հետ։ Լինելով

---

[10] D. Bell, The revolution of rising entitlements, „Fortune", Chicago, 1975, vol 91, № 4. p. 102.

օգտակար մի ֆիկցիա, «պոստինդուստրիալ հասարակությունը» նպաստում է հասարակության զարգացման հիմնական տենդենցների բացահայտմանը։ Թվում է, թե ելակետային հասկացության նման մեկնաբանությունը պետք է բացառի հեղինակի տեսական կառուցումների համադրելիությունը այս կամ այն կոնկրետ հասարակական սիստեմի հետ։ Բայց ստացվում է այնպես, որ վերոհիշյալ ֆիկցիան, աբստրակցիան լիովին համադրելի է հասարակության որոշակի տիպի՝ բուրժուականի հետ։

«Գալիք պոստինդուստրիալ հասարակությունը» գրքի ներածության մեջ Դանիել Բելը ստիպված էր ընդունել, որ «պոստինդուստրիալ հասարակության» գաղափարը ոչ այլ ինչ է, քան արդի արևմտյան հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունների պրոգնոզ։ Այդ իսկ պատճառով, չնայած ամերիկյան սոցիոլոգի վերապահումներին, «պոստինդուստրիալ հասարակության» կոնցեպցիան առաջին հերթին և գլխավորապես բուրժուական քաղաքակրթության հնարավոր զարգացման սոցիալական իդեալն է։ Սրանից էլ, ըստ երևույթին, պետք է ելնել, ինչպես այդ տեսության, այնպես էլ նրա հեղինակի սոցիալ-քաղաքական դիրքորոշման գնահատականը տալիս։

Բելի առաջադրած պրոբլեմներն իրոք որ կարևոր են և անհետաձգելի։ Այսօր դրանց լուծման վրա են աշխատում բուրժուական բոլոր այն խոշոր տնտեսագետներն ու սոցիոլոգները, որոնց անհանգստացնում են զարգացած կապիտալիստական երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի ճգնաժամային երևույթները։

Փորձելով ուրվագծել արդի արևմտյան հասարակության պրոբլեմներն ապագա հասարակության կոնտեքստում, բուրժուական ֆուտուրոլոգների մեծ մասը չարաշահում է էքստրապոլյացիայի մեթոդը։ Մասնավորապես, այդպիսի չարաշահման բնորոշ օրինակ է ամերիկյան ֆուտուրոլոգներ Հ. Կանի և Է. Վիների «2000 թվականը» գիրքը[11], որտեղ հեղինակները պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման տենդենցները մեխանիկորեն վերագրում են ապագա հասարակությանը։ «2000 թվականը» չդիմացավ ժամանակի քննությանը և սուր քննադատության ենթարկվեց հենց իրենց՝ բուրժուական ֆուտուրոլոգների կողմից։ Վերջիններիս թվում էր նաև Դանիել Բելը։ Նա գտնում է, որ ապագան ընդհանրապես կանխատեսելի չէ։ Բելը չի օգտագործում «ֆուտուրոլոգիա» տերմինը, հայտարարելով այն անմիտ ու անօգտակար։ Ամերիկյան սոցիոլոգն իր խնդիրն է համարում ոչ թե կանխատեսումը, այլ բուրժուական հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունների պրոգնոզը առաջիկա 30—50 տարվա համար[12]։

Բայց քանի որ սոցիալական պրոգնոզը պրոգնոզի մյուս տարատեսակներից ավելի փոքր ճշգրտության աստիճան ունի (օրինակ՝ տեխնոլոգիական, տնտեսական կամ դեմոգրաֆիական), ուստի Բելը գտնում է, որ սոցիալական զարգացման ապագա ուղղվածության մանրամասները սկզբունքորեն հնարավոր չէ որոշել։ Այս տեսակետից, նա փորձում է ոչ թե կանխատեսել ապագան, այլ նշել այն հարցերը, որոնք կծագեն ապագայում։ Ամերիկյան սոցիոլոգը,

---

[11] H. Kahn and A. Wiener, The Year 2000. A Framework For Speculation on the Next thirty-three Years, N. Y., 1967.

[12] «Կանխատեսում» և «սոցիալական պրոգնոզ» հասկացությունների տարբերության մասին տե՛ս И. В. Бестужев-Лада, Окно в будущее, М., 1972, глава I.

ինչպես տեսնում ենք, ձգտում է տալ միայն պրոբլեմների զարգացման պրոգնոզ, ամենևին էլ իր նպատակը չհամարելով դրանց լուծումը։ Այսպիսին են «պոստինդուստրիալ հասարակության» տեսության ելակետն ու մեթոդաբանական դիրքորոշումը։

Ինչպես արդեն նշեցինք, Բելը որոշակիորեն սահմանափակում է արևմտյան հասարակության զարգացման հեռանկարների պրոբլեմատիկան՝ ձգտելով խուսափել տեխնոկրատների թույլ տված սխալները կրկնելուց։ Պատահական չէ, որ խորհելով «պոստինդուստրիալ հասարակության» սոցիալական զարգացման շուրջը, նա գլխավորապես դնում է որոշակի պրոբլեմներ՝ չփորձելով պատասխանել այն հարցերին, թե ինչ և ինչպես պետք է անել այդ պրոբլեմները լուծելու համար։ Մասամբ նաև դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ «Գալիք պոստինդուստրիալ հասարակությունը» գրքում թեև կան բազմաթիվ թվեր ու փաստեր, աղյուսակներ, էմպիրիկ ուսումնասիրությունների արդյունքներ, հեղինակությունների վկայակոչություններ, վիճակագրական հարուստ նյութ, բայց չկա կուռ տրամաբանություն, առաջադրված հարցերի տրամաբանական մեկնաբանություն։

«Պոստինդուստրիալ հասարակության» տեսությունը միաժամանակ հավակնում է ավելի լայն ընդհանրացումների, փորձում է բացատրել արդի կապիտալիզմի հակասությունները։ Վերջին հաշվով, այն իրենից ներկայացնում է սոցիալական զարգացման բուրժուական մի նոր տեսություն, որը հակադրվում է հասարակական-պատմական պրոցեսի օրինաչափությունների մարքսիստական-լենինյան ըմբռնմանը։ Այս տեսակետից Դանիել Բելը բուրժուական ֆուտուրոլոգիայի հոր՝ Օսիպ Ֆլեհտհայմի պատգամներին միանգամայն հավատարիմ է։

Պատմական զարգացման օրինաչափական բնույթի և սոցիալական ճանաչողության օբյեկտիվության մարքսիստական ըմբռնմանը Բելի կոնցեպցիաների հակադրության վկայությունն են առաջին հերթին այն տեսական-մեթոդաբանական նախադրյալները, որոնք ընկած են նրա սոցիալական պրոգնոզի հիմքում։ Ամերիկյան սոցիոլոգը գտնում է, որ, ինչպես «պոստինդուստրիալ հասարակությունը», այնպես էլ «սոցիալական կառուցվածքը» սոցիալական իրականության արտացոլումը չեն։ Դրանք ոչ այլ ինչ են, քան կոնցեպտուալ սխեմաներ՝ հիմնված «առանցքային» սկզբունքների վրա և օժտված համապատասխան «առանցքային կառուցվածքներով»։

Սոցիալական կառուցվածքի այդպիսի ըմբռնումը հանգում է նրան, որ «առանցքային սկզբունքների» բացահայտման և ուսումնասիրության պրոցեսում հետին պլան է մղվում պատճառական կապի ուսումնասիրությունը։ Դանիել Բելը հրաժարվում է սոցիալական զարգացման պատճառների ճանաչողությունից՝ փորձելով շեշտել կարևոր, բայց եզակի այն գործոնները, որոնք անհրաժեշտ են իր կոնցեպտուալ սխեմայի ներքին տրամաբանության, բայց ոչ թե սոցիալական իրականության զարգացման օբյեկտիվ պատճառների բացահայտման համար։ Նա փորձում է բացահայտել սոցիալական փոփոխությունները կոնկրետ կոնցեպտուալ սխեմայի շրջանակներում գործող «առանցքային սկզբունքների տարրական տրամաբանության» օգնությամբ։ Հեղինակի համոզմամբ, այդ տրամաբանությունը թույլ է տալիս կանգնել սոցիալական կեցության զարգացման ուղղության «բաղմահեռանկարային» տեսակետի վրա։

Դանիել Բելի առաջարկած «առանցքային սկզբունքը» հասարակության ուսումնասիրության հիմքում դնում է ոչ թե մարդկանց կյանքի նյութական պայմանները, իրական կյանքի արտադրությունն ու վերարտադրությունը, սեփականատիրական հարաբերությունները, այլ տեսական գիտելիքը: Ամերիկյան սոցիոլոգը պնդում է, որ հասարակության կազմակերպական-տեխնիկական, սոցիալական, քաղաքական և մշակութային կառուցվածքների բոլոր նորամուծությունների ու առաջադիմական փոփոխությունների աղբյուրը տեսական գիտելիքն է բառիս լայն իմաստով: Հասարակության մեջ տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների գլխավոր աղբյուրը գիտելիքի բնույթի փոփոխությունն է, որն արտահայտվում է էքսպոնենցիալ աճի և դիֆերենցիացիայի միջոցով: Գիտությունը դառնում է ակտիվ քաղաքականության օբյեկտ: Գիտության բնագավառում այս բոլոր տեղաշարժերը Դանիել Բելն արտահայտում է «տեսական գիտելիքի կոդավորում» հասկացության միջոցով: Տեսական գիտելիքը նա համարում է հասարակության «ստրատեգիական ռեսուրս», «առանցքային սկզբունք», իսկ համալսարաններն ու գիտահետազոտական մյուս հիմնարկները՝ «հասարակության առանցքային կառուցվածքներ»: Եվ քանի որ գիտության, «ինտելեկտուալ տեխնոլոգիայի», տեսական գիտելիքի դերն ընդհանրապես առաջնակարգ նշանակություն է ստանում արդի հասարակության մեջ, ապա գիտությունը վեր է ածվում «պոստինդուստրիալ հասարակության» յուրատեսակ մի «էթոսի», կազմակերպում և իր շուրջը միավորում է հասարակության մյուս բոլոր կառուցվածքները:

Ինչպես նշում է Բելը, «պոստինդուստրիալ հասարակությունը» «գիտելիքի հասարակություն» է այն իմաստով, որ նորամուծությունների աղբյուրները սկիզբ են առնում գիտական հետազոտություններից: Դա վկայում է գիտության և տեխնոլոգիայի միջև ձևավորվող սկզբունքորեն նոր տիպի փոխհարաբերության մասին: Այդ նոր փոխհարաբերության պայմաններում հասարակության «որակը», ինչպես նաև հիմնական հարստությունը որոշվում են գիտելիքով և գիտական անձնակազմով[13]: Իր դրույթները Դանիել Բելը հիմնավորում է վիճակագրական տվյալներով, տեսական հաշվարկներով, որոնք գիտական կադրերի, գիտության տեսակարար կշռի, ժամանակակից հասարակության մեջ համալսարանների ու գիտական մյուս կենտրոնների ազդեցության աճի վկայություններն են:

Ամերիկյան սոցիոլոգի դատողությունները զուրկ չեն օբյեկտիվ հիմքից: Դրանք ելնում են գիտա-տեխնիկական հեղափոխության հետևանքով հասարակության մեջ տեղի ունեցող ռեալ փոփոխություններից: Իրոք, արդի դարաշրջանում հասարակության գիտական ինստիտուտի մեջ տեղի են ունենում որակական տեղաշարժեր: Եվ մենք հասարակության մեջ տեսական գիտելիքի դերի բարձրացման, գիտության՝ անմիջական արտադրողական ուժի վերածվելու վկաներն ենք: Սակայն տեսական գիտելիքի նյութականացման, գիտության՝ անմիջական արտադրողական ուժի վերածվելու պրոցեսը բուրժուական հասարակության զարգացման ժամանակակից ստադիայի արժեքավորումը չէ: Այլ բան է, որ հատկապես ժամանակակից գիտա-տեխնիկական հեղափոխության պայմաններում է այդ պրոցեսը աննախադեպ զարգանում և

[13] D. Bell, The Coming of Post-Industrial Society, pp. 14, 20, 26, 44, 212, 229.

հստակ ուրվագծվում հասարակության մեջ՝ կյանքի կոչելով կառուցվածքային որակական փոփոխություններ արտադրության տեխնիկական կազմակերպման, մարդկանց սոցիալական գործունեության, բուրժուական տեսաբանների աշխարհայացքային նկարագրի մեջ։

Հայտարարելով իրեն «պոստմարքսյան» փիլիսոփա, Դանիել Բելը չի կարող չիմանալ, որ ավելի քան 100 տարի առաջ հիշյալ պրոցեսներն հանճարեղորեն ընդգծվել են գիտական կոմունիզմի հիմնադրի կողմից։ Ավելին. Կարլ Մարքսը ոչ միայն ընդգծեց այդ պրոբլեմների նշանակությունն ապագա հասարակության համար, այլև բացահայտեց դրանց սոցիալ-տնտեսական արմատներն ու հետևանքները։ Ուսումնասիրելով գիտության զարգացման տենդենցները, նա բազմիցս նշել է, որ արտադրական պրոցեսների հետ կապված ամեն մի գիտելիքի զարգացում իրականանում է կապիտալիստական արտադրության հիման վրա (պատմական իմաստով)։ Գիտության ընդարձակ կիրառման համար, ի հակադրություն ֆեոդալիզմի, կապիտալիզմը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ։ Միայն կապիտալիստական արտադրաեղանակի պայմաններում է, որ պատմության մեջ «...առաջին անգամ ծագում են այնպիսի պրակտիկ պրոբլեմներ, որոնք կարող են լուծվել միայն գիտական ճանապարհով»[14],

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում գիտությունն ավելի լայնորեն է ներխուժում արտադրություն, հասարակության նյութական ու հոգևոր կյանքի ոլորտները։

Արդյունաբերության բոլոր ճյուղերում կիրառվող ժամանակակից գիտության նվաճումները, գիտական աշխատողների թվաքանակի աճը, որոնք, ինչպես նշում են որոշ բուրժուական սոցիոլոգներ, վեր են ածվում «ինտելեկտուալ վերնախավի», բուրժուական գիտակցության մեջ ստեղծում են այն պատրանքը, թե ժամանակակից բուրժուական հասարակությունը հիմնվում է գիտության ինստիտուտի վրա։ Ինտելեկտուալների կողմից ղեկավարվող այդ հասարակությունը մեզ հիշեցնում է Պլատոնի «Հանրապետությունը», որտեղ պետության սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքը կանխորոշում էին փիլիսոփաները։ Բայց, եթե Պլատոնի ուտոպիան ենթադրում էր երկու դասակարգերի՝ մի կողմից փիլիսոփաների, իսկ մյուս կողմից զինվորականների ու արհեստագործների գոյություն, ապա Դանիել Բելի «պոստինդուստրիալ հասարակությունն» ունի մի փոքր ավելի «բարդ» սոցիալական կառուցվածք։ Կառավարող դասակարգն այստեղ գիտնականների ստեղծագործ վերնախավն է։ Այնուհետև գալիս է միջին դասակարգը՝ ինժեներներն ու պրոֆեսորները։ Անմիջականորեն արտադրության ոլորտում զբաղված «պրոլետարիատը» բաղկացած է տեխնիկներից և գրավում է սոցիալական հիերարխիայի ստորին աստիճանը[15]։

Հետևելով տեխնոկրատներին, Բելը անդրադառնում է «նոր դասակարգի» ձևավորման հարցին։ Եթե Բերնհեմի «Կառավարողների հեղափոխության» մեջ այդ նոր դասակարգը մենեջերներն են, իսկ Գելբրայթի «նոր ինդուստրիալ հասարակության» մեջ այսպես կոչված «տեխնոստրուկտուրան», ապա Դա-

---

[14] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 47, стр. 554.

[15] D. Bell, The Coming of Post-Industrial Society, pp. 213—214.

նիել Բելը համարվում է «Մեծ գիտության» գաղափարախոսը[16]։ Նրա «ինտելեկտուալ մասնագիտությունների դասակարգը» բաղկացած է չորս խավից՝ «զուտ գիտական», տեխնոլոգիական, ադմինիստրատիվ և մշակութային։ Թվում է, թե «պոստինդուստրիալ հասարակության» հիմնավորման տրամաբանությունից պետք է հետևի «ինտելեկտուալ դասակարգի» լիիշխանությունը։ Բայց ամերիկյան սոցիոլոգն այստեղ երկմտում է։ Մի կողմից, նա կուզենար իշխանության գլուխ տեսնել իր «նոր դասակարգին», իսկ մյուս կողմից նա չի կարող չտեսնել իշխանության ռեալ կրողին՝ մոնոպոլիստական բուրժուազիային։ Եվ պատահական չէ, որ Բելը ստիպված է ընդունել միասնական շահի բացակայությունն «ինտելեկտուալ խավերի» միջև, այն, ինչ վաղուց ընդգծվել է Մարքսի և Լենինի կողմից։

«Պոստինդուստրիալ հասարակության» մեջ Բելն ընդունում է սոցիալական կառուցվածքի ու մշակույթի միջև խորացող հակասության առկայությունը, որն անհրաժեշտաբար հանգեցնում է «տեխնոլոգիական» և «մշակութային» խավերի օտարմանը։ Իշխանության պրոբլեմի նկատմամբ Դանիել Բելի երկակի ու հակասական՝ վերաբերմունքը պայմանավորված է նաև իդեալականի, ցանկալիի և իրականի, գոյություն ունեցողի միջև խորացող հակասությամբ։ «Ինտելեկտուալ վերնախավի» ձևավորման հակասական տենդենցները «պոստինդուստրիալ հասարակության» տեսության հեղինակին կանգնեցնում են փակուղու առաջ։ Նա չի ցանկանում և չի կարող ընդունել «ինտելեկտուալ մասնագիտությունների դասակարգի» պառակտվածության փաստը բուրժուական հասարակության մեջ։ Մյուս կողմից, դա նրան՝ լիբերալ-բուրժուազիայի գաղափարախոսին, թույլ չի տալիս հստակ պատասխանել այն հարցին, թե ո՞ւմ է պատկանում իշխանությունն այսօր Արևմուտքում և ո՞ւմ է պատկանելու այն «պոստինդուստրիալ հասարակության» մեջ։

Իշխանության պրոբլեմը քաղաքականության կենտրոնական պրոբլեմն է և պատահական չէ, որ Դանիել Բելը չի կարողանում լուծել այն։ Իբրև լիբերալ բուրժուազիայի գաղափարախոս, նա չի կարող հաշտվել «տրադիցիոն» բուրժուական դեմոկրատիայի ոտնահարման հետ՝ իմպերիալիզմի պայմաններում։ Մյուս կողմից, նա չի կարող թույլ տալ նաև կոմունիստական այլընտրանքը՝ պրոլետարիատի դիկտատուրան։ Հենց այս հարցում է, որ Բելը հատուկ «ջանասիրություն» է ցուցաբերում՝ մերժելով բանվոր դասակարգի հետ կապված քաղաքական զարգացման ամեն մի հեռանկար[17]։ «Պոստինդուստրիալ հասարակության» տեսության հեղինակի քաղաքական կոնցեպցիան տրամաբանության առումով լրջորեն կաղում է, փաստ, որը չեն կարող չընդունել նույնիսկ նրա կոլեգաներն Ամերիկայում[18]։

---

[16] J. Burnham, The Managerial Revolution, N. Y., 1941; Дж. Гэлбрейт, Новое индустриальное общество, М., 1969.

[17] D. Bell, Labour in the Post-Industrial Society,—„Dissent", N. Y., 1972, vol. 19, № 1, pp. 164—165.

[18] N. Birnbaum, The Coming of Post-Industrial Society, A Venture in Social Forecasting by Daniel Bell. („New York Times Book Review", 1973, I. July); Ch. Lasch, Take me to your leader („New York Review of Books". 1973, 18 October); T. Tilton, The next Stages of History. („Social Research", Albany (N. Y.), 1973, vol. 40, № 4) և այլն։

Դանիել Բելը շրջանցում է մտավորականության իրական դրության պրոբլեմը ժամանակակից բուրժուական հասարակության մեջ։ Այդ սոցիալական սիստեմի շրջանակներում գիտության մարդիկ, նրանց գիտելիքները ծառայում են «մեծ բիզնեսին»։ Խոշոր կապիտալիստական արդյունաբերությունը ճեղքում է գիտությունը, հակադրում նրան աշխատանքին, ստիպում է նրան ծառայել կապիտալին։ «...Հասարակական աշխատանքի վրա հիմնված գիտության, բնության ուժերի և աշխատանքի արդյունքների հսկայական զանգվածների կիրառությունները,— գրում է Կ. Մարքսը,— հանդես են գալիս միայն որպես աշխատանքի շահագործման միջոցներ, հավելյալ արդյունքի յուրացման միջոցներ և, հետևաբար, որպես կապիտալին պատկանող, աշխատանքին հակադրվող ուժեր»[19]։

Բելը բուրժուական այն գաղափարախոսներից է, որոնք, տեսնելով կապիտալիզմի «առանձին» հակասությունների անլուծելիությունն ու արձանագրելով գիտա-տեխնիկական հեղափոխության բացասական հետևանքները, միաժամանակ փորձում են ուրվագծել նույն բուրժուական քաղաքակրթության զարգացման հեռանկարները։ Բնութագրելով այս տիպի գաղափարախոսներին, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը դեռևս 1848 թ. «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» գրել են. «Բուրժուազիայի որոշ մասը ցանկանում է հասարակական ախտերը բուժել նրա համար, որպեսզի ամրապնդի բուրժուական հասարակության գոյությունը»[20]։ Նրանք, շարունակում են Մարքսը և Էնգելսը, «ուզում են պահպանել ժամանակակից հասարակության գոյության պայմանները, բայց առանց դրանցից անխուսափելիորեն բխող պայքարի ու վտանգների։ Նրանք ուզում են պահպանել ժամանակակից հասարակությունը,— սակայն առանց այն տարրերի, որոնք հեղափոխականացնում ու քայքայում են այն։ Նրանք կկամենային ունենալ բուրժուազիա՝ առանց պրոլետարիատի...»[21]։ Գիտական կոմունիզմի հիմնադիրների այս դիպուկ բնորոշումը լիովին համապատասխանում է Բելի՝ որպես լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսի նկարագրին։ Պատահական չէ, որ Միացյալ Նահանգների սոցիալական կառուցվածքի փոփոխության պրոբլեմներին նվիրված ամերիկյան սոցիոլոգիական ամսագրերից մեկում հրապարակած «Աշխատանքը պոստինդուստրիալ հասարակության մեջ» վերնագրով հոդվածում[22] նա ուղղակի գրում է առաջիկա տասնամյակում բանվոր դասակարգի «էրոզիայի», աշխատանքի և կապիտալի միջև հակասության «վերացման» մասին։ Բուրժուական գաղափարախոսի այս ցանկությունը հեռու է իրականությունից։ Սնանկ են արդի պայմաններում բանվոր դասակարգի վճռական տեղի ու դերի, սոցիալական առաջընթացում նրա ունեցած հեղափոխական նշանակության ժխտման, խեղաթյուրման փորձերը[23]։

«Պոստինդուստրիալ հասարակությունը» հեղինակի կողմից ներկայացվում է և՛ որպես սոցիալական իդեալ, և՛ որպես իրականություն (որը հակա-

---

19 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, стр. 398—399.

20 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 172։

21 Նույն տեղում, էջ 173։

22 „Dissent", N. Y., 1072, vol. 19, № 1, p. 163—189.

23 «Рабочий класс СССР и его ведущая роль в строительстве коммунизма», М., 1975; «Современный капитализм и рабочий класс: критика антимарксистских концепций», М., 1976 и др.

սում է ինչպես նրա մեթոդաբանական դիրքորոշմանը, այնպես էլ սոցիալական կանխատեսման նպատակին)։ Այդ հասարակությունը սոցիալական մի ուտոպիա է, որին պետք է ձգտել (Բելի կարծիքով), բայց որը անհասանելի է իրական և անլուծելի հակասությունների պատճառով։ Իսկ որտե՞ղ պետք է փնտրել այդ հակասությունների պատճառը։ Պարզվում է՝ մարդու բնածին էության մեջ։ «Բայց, ինչը որ մնայուն է,— գրում է Բելը,— դա մարդու երկակի բնույթն է։ Կործանիչ մղումները, նախնադարյան բնազդները, պառակտումն ու ոչնչացումը՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կարգի որոնումներն արվեստում և կյանքում, ներդաշնակության հաստատմանն ուղղված կամքը...»[24]։

Հետևելով էկզիստենցիալիստներին, նեոֆրեյդիստներին ու փիլիսոփայական անտրոպոլոգիայի ժամանակակից ներկայացուցիչներին, Դանիել Բելը պնդում է մարդ արարածի «երկակի բնույթի» հավերժությունը։ Նա համոզված է, որ մարդկային էակը միաժամանակ ձգտում է և՛ կործանման, և՛ ստեղծման, աշխարհում կարգի ու ներդաշնակության հաստատման։ Այդ երկու իրարամերժ գծերը պայմանավորված են, մի կողմից, անսանձ իռացիոնալ բնազդներով, իսկ մյուս կողմից բանականությամբ։

Էկզիստենցիալիստական ու նեոֆրեյդիստական դատողությունների նման համակցումը սայենտոկրատական դիրքորոշման հետ առաջին հայացքից կարող է անսպասելի թվալ։ Չէ՞ որ Դանիել Բելն այն սոցիոլոգներից է, որոնք ղեկավարվում են ռացիոնալիստական, սցիենտիստական մտածելակերպով և սկզբունքորեն մերժում են իռացիոնալիզմն ու անտիսցիենտիզմը։ Բայց բայվելով մոնոպոլիստական կապիտալիզմի սիստեմի հակասությունների լուծման անհնարինության փաստին, գիտակցելով դրանց անխուսափելիությունը «պոստինդուստրիալ» հասարակության մեջ, նա ստիպված է հիմնավորել ուտոպիայի «օգտակարությունն ու անհրաժեշտությունը»։ Եվ քանի որ նրա սոցիալական ուտոպիան կապված է բուրժուական քաղաքակրթության զարգացման հեռանկարների հետ, ապա ոչինչ չի մնում, քան հրաժարվել «պոստինդուստրիալ հասարակության» իդեալից, որը հստակ պատկերացում չի տալիս սոցիալական իդեալի և իրականության միջև խզման հաղթահարման հնարավորությունների մասին, կամ էլ՝ նշելով այդ իդեալի ցանկալիությունն ու անհրաժեշտությունը, այն համարել անիրականանալի՝ մարդ արարածին հատուկ «բնածին» հակասությունների պատճառով։ Դանիել Բելն ընտրում է երկրորդ ճանապարհը, որը լիբերալ բուրժուայի կոմպրոմիսն է պետական մոնոպոլիստական կապիտալիզմի սոցիալական իրականության հետ։

Ժամանակակից բուրժուական հասարակությունը Բելը քննադատում է «պոստինդուստրիալ հասարակության» հնարավոր զարգացման տեսանկյունից, բայց սոցիալական իրականության և ապագայի իդեալի միջև «հավերժական խզման», ցանկալի հասարակարգի անհասանելիության վերաբերյալ նրա դատողությունները հանգում են մարդկության զարգացման մյուս՝ սոցիալիստական այլընտրանքի սկզբունքային մերժմանը, այլընտրանք, որն իրականանալի է միայն բուրժուական հասարակական սիստեմի սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային ինստիտուտների հեղափոխական վերափոխման շնորհիվ։

---

[24] D. Beil, The Coming of Post-Industrial Society, p. 488.

Եթե տեխնոկրատական ուտոպիաների համար բնորոշ էր բուրժուական հասարակության ուղղակի, ակնհայտ ու բացարձակ պաշտպանությունը, ապա «պոստինդուստրիալ հասարակության» ուտոպիան ծառայում է մարդկային կոյության բուրժուական հիմքերի և՛ քննադատությանը, և՛ արդարացմանը։ Դրանով է բացատրվում Դանիել Բելի տեսական դրույթների անհետևողականությունն ու երկակի բնույթը։ Պատահական չէ, որ կապիտալիզմի սոցիալական զարգացման մասին նրա դատողությունները, ապագա հասարակարգի նրա պրոգնոզը բուրժուական տեսաբաններից ոմանք համարում են տեխնոկրատական[25]։ Եվ չնայած իրականում ամերիկյան սոցիոլոգը հանդես է գալիս հակատեխնոկրատական դիրքերից, քննադատելով տեխնոկրատական արժեքները, իդեալներն ու մտածելակերպը, այնուամենայնիվ մի էական կետում մարդկային քաղաքակրթության զարգացման հեռանկարների սայենտոկրատական պատկերը համընկնում է տեխնոկրատականի հետ. երկու դեպքում էլ խոսքն ապագա հասարակության սոցիալական զարգացման կոնկրետ՝ բուրժուական այլընտրանքի մասին է։

«Պոստինդուստրիալ հասարակության» ուտոպիան, հետևաբար, կատարում է լիովին որոշակի սոցիալական ֆունկցիա, քանի որ, վերացարկելով գոյություն ունեցող հասարակական սիստեմի սոցիալիստական վերափոխման հեռանկարից, այն ծառայում է status quo-ի եթե ոչ լրիվ արդարացմանը, ապա, համենայն դեպս, այն բուրժուական վերափոխումների արդարացմանը, որոնք իրականացվում են պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի շրջանակներում գիտա-տեխնիկական հեղափոխության ազդեցությամբ։ Այսպիսով, ամերիկյան սոցիոլոգ Դանիել Բելի «պոստինդուստրիալ հասարակության» տեսությունը հին հասարակարգի գաղափարախոսական պաշտպանության նորագույն տարբերակներից մեկն է։

КРИТИКА КОНЦЕПЦИИ «ГРЯДУЩЕГО ПОСТИНДУСТРИАЛЬНОГО ОБЩЕСТВА» ДАНИЕЛА БЕЛЛА

БАГРАТ ГАРИБДЖАНЯН

Резюме

Теория «постиндустриального общества» Даниела Белла является одной из наиболее известных современных буржуазных теорий социального прогнозирования.

Исходная классовая позиция автора, его идеологическая установка побуждают Д. Белла строить свою футурологическую концепцию, исходя из абстрактного социального идеала. В итоге его футурологическая теория, выполняя определенный социальный заказ, ведет к игнорированию им реальных тенденций развития мирового революционного процесса, стремится доказать извечность буржуазных обществен-

[25] B. Cochran, Paradise, dystopia, or just more of the same („Nation", N. Y., 1973, vol. 217, № 13).

ных отношений, неизбежность слияния социализма с капитализмом на почве научно-технической революции, под которым он, по-существу, понимает трансформацию социализма в капитализм.

Критика подобных апологетических концепций с позиций теории научного коммунизма, раскрытие их социально-классового содержания и идеологической направленности продолжает оставаться актуальной задачей марксистско-ленинского обществознания, вытекающей из положений XXV съезда КПСС о значении критики буржуазной идеологии.